Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ

ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

891.71մ
Տ-80

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ
1940

23 JUL 2013
Ա-80
Ա.
3733

Նկարները՝
Ե. ԼԻՍՍՆԵՐԻ

2218
40

891.715
Ա-80
Ա.
2011-05

Գարունը յեկավ, հոսեցին ջրերը։

Մանուկները վերցրին տախտակները, փոքրիկ նավակ շինեցին, նավակը ջրերի վրա բաց թողին։

Նավակն սկսեց լողալ, իսկ մանուկները վազում եյին նրա հետևից, աղմկում, վոչինչ չեյին տեսնում իրենց առջև և ընկան լճակի մեջ։

ԱՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ

Ռոզկան ձագերը ուներ բակում, խոտի վրա։ Ռոզկան գնացել եր ուրիշ տեղ։ Մանուկները յեկան վերցրին փոքրիկ շնիկին ու բերին վառարանի վրա դրին։ Ռոզկան յեկավ, ձագուկին չգտավ ու վոռնաց։ Հետո նա գըտավ ձագուկին ու սկսեց վոռնալ վառարանի մոտ։ Մանուկները շնիկին վերցրին ու տվին Ռոզկային և Ռոզկան նրան բերանն առած՝ իր տեղը տարավ։

Թռչունը թփի վրա բուն եր հյուսել։ Մանուկները բունը գտան և ցած բերին, դրին գետնի վրա։

— Նայիր Վասյա, յերեք թռչնիկ կա։

Մյուս որն առավոտյան մանուկները յեկան, բայց բունը դատարկ եր արդեն։

Շատ ափսոսացին։

Առավոտյան Կատյան սունկի գնաց, իր հետ վերցրեց և Մաշային։ Մաշան փոքրիկ եր։ Ճանապարհին մի գետակ կար։ Կատյան գուլպաները հանեց, Մաշային շալակեց և ջուրը մտավ։

— Պինդ բռնիր Մաշա և եղպես մի սեղմիր կոկորդս։ Ձեռքերդ բաց թող, շունչս կտրվում է։

Յեվ Կատյան, Մաշային անցկացրեց գետակը։

Մանուկները խոտերի մեջ մի վոզնի գտան։

— Վասյա, վերցրու դրան։

— Ծակծկում է։

— Դե, գլխարկդ դիր գետնին, իսկ յես նրան կգլորեմ գլխարկի մեջ։

Գլխարկը փոքր եր և յերեխաները գնացին, իսկ վոզնին չվերցրին։



Անտառում մի սկյուռ կար։ Այդ սկյուռը ձագուկներ ուներ։ Սկյուռները ապրում էին ծառի փչակում։

Յեկան Միշան ու Կոլյան, նրանց տարան և սկյուռները նրանց մոտ, վանդակի մեջ էին ապրում։

Սերյոժան յերեք շուն ուներ, նրանց յերեքին էլ սայլակին լծեց ու քաշեց։ Շները փախցրին սայլակը և Սերյոժան չհասավ նրանց հետևից։



Պետյան ու Միշան մի ձի ունեին։ Նրանց մեջ վեճ ծագեց. ումն է ձին։ Նրանք սկսեցին ձին խլել իրար ձեռքից։

— Ինձ տուր, ձին իմն է։

— Չե, դու տուր ինձ։ Ձին քոնը չե, իմն է։

Մայրիկը յեկավ, ձին վերցրեց և յերկուսն ել մնացին առանց ձիու։

Մանուկները իրենց համար մարգեր եյին շինել։ Մի անգամ խոզերի յերամակը լցվեց նրանց բանջարանոցը։

— Յերեխաներ, շուտ արեք, ժուչկային արձակեք։ Ժուչկա, շուտ արա, հաջիր խոզերի վրա, դուրս քշիր դրանց մարգերի միջից։

Ձմեռ եր, բայց տաք եր։ Շատ ձյուն կար։

Մանուկները լճափին եյին։ Ձյունը հավաքեցին, տիկնիկ շինեցին։

Նրանց ձեռքերը սառեցին։ Բայց հիանալի տիկնիկ դուրս յեկավ։ Տիկնիկի բերանին ծըխամորճ կար։ Տիկնիկի աչքերի տեղն ածուխ դրին։

Միշան մի սահնակ ուներ։
Մաշան ու Պետյան նստեցին սահնակը։
— Քաշի՛ր սահնակը, Միշա։
Բայց Միշայի ուժը չեր պատում։

Փոքրիկ աղջիկները հյուր յեկան Մաշայի մոտ՝ թեյ խմելու։

Մաշան տանտիրուհին եր և նստել եր սեղանի մոտ հյուրերին պատվելու։ Բայց տանտիրուհին փոքրիկ եր։ Նա թեյամանը վերցրեց, բայց ունկը տաք եր։ Մաշան թեյամանը վայր ձգեց ու կոտրեց և իրեն ու մյուսներին այրեց։

14

Թարգմանեց՝
Ա. Հովհաննիսյան
Տեխ. խմբագիր՝
Ա. Ն. Գասպարյան
Սրբագրիչ՝
Ս. Փարսադանյան

Գլավլիտի լիազոր՝ Բ—1121 Հրատ. 3882
Պատվեր 135, Տիրաժ 5000

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0391502

5453

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

Л. Н. ТОЛСТОЙ
ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ
Гиз Арм ССР, Ереван, 1940 г.